

Մ Ա Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Ք

ԿԱՐԳԷ ԴՈՒՐՍ ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆ.

Մօտերս Բանատա կղզւոյն մէջ երկու Գաղղիացի կանայք իրենց պսակին յիսներեակը տօներ են, այսինքն իրենց կարգուիլը յիսուն տարի լինելուն տարեդարձին հանդէսը կատարեր են: Սոքա երկուքն ալ քոյր են իրարու, եւ իրենց հայրը Լէմէ Տըլում վախճաներ է 1849-ին, ձգելով իւր ետեւէն 225 զաւակ ու թոռներ որ մինչեւ ցայժմ կենդանի են:

Քուէպէք քաղաքն ալ այս տարիներս Ռոզալի Հան—Թալպոթ անունով կին մը մեռեր է 78 տարեկան, որ կարգուած է եղեր 15 տարու ատենը, եւ թողեր է 17 զաւակ ու 188 թոռ ու թոռներու որդիք:

ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆԸ ՕՐԻՆԱԿ.

Լոնտոնի լրագիրներէն մէկը (Daily Telegraph) այս օրերս սկսեր է տպագրուիլ ամէն մէկ թերթէն 205 հազար եւ 206 հազար օրինակ:

ՎԵՀԱՆՁՆԱԿԱՆ ԱՐՀԱՄԱՐՀՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՏԱՀԱՅ.

Ատենով քանի մը լիր մարդիկ Հռովմայ կայսերաց մէկուն արծանին քիթը բերանը կկոտորտեն. կայսեր մարդիկը ոտք կկոխեն թէ պէտք է անպատճառ պատժել չարաչար այն անզգամները: Իսկ կայսրը ձեռքն իւր երեսին վրայ քաւցընելով պատասխան կուտայ թէ «ես ինձի վնաս մը եղած չեմ տեսներ. մարդիկը հանգիստ թողուցէք»:

Ասոր նման գեղեցիկ օրինակ մը տուեր է այս օրերս նաեւ Ֆրուսիոյ երեսփոխանաց խորհրդարանը:

Թեթեւ ու շաղփաղի օրագիրներէն մէկը (Der kleine Reactionär) երեսփոխաններուն *խաբերայ* ու *անշահ* ածականները տուեր է: Այն յօդուածը խորհրդարանին գահերէցը կկարդայ ամենուն առջեւ ու վրայ կբերէ թէ «իմ կարծիքս այս է թէ խորհրդարանը պէտք է վեր բռնէ ինքզինքը այսպիսի ցած եւ աղտողի նախատինքներէ, ուստի եւ արհամարհելով ետ կենայ այն օրագրին դէմ դատաստան բանալէն»: Եւ թէպէտ մէկ երկու հոգի վրէժխնդրութիւն կպահանջեն, բայց երեսփոխաններուն մեծ մասը գահերիցուն խորհուրդը աւելի վեհանձնական կձանձնան ու կորոշեն որ արհամարհուի այն նախատինքը:

ԱՆԳՂԻԱՅԻ ՄԷՋ ԾԱԽՈՒԱԾ ՆԱՐԻՆՁԸ.

1862 տարւոյն մէջ Անգղիա տարուեր է 650 միլիոն նարինջ (*փօրուզայ*). որ եթէ բոլոր բնակիչներուն վրայ բաժնուի՝ մարդ գլուխ 22 նարինջ կիյնայ, թէպէտ եւ յայտնի է որ հազարներով մարդիկ նարնջին կեղեւն անգամ չեն տեսած...

ՔԱԼԻՖՈՐՆԻԱՅ ՈՐԴՆՈՒԿԸ.

Քալիֆոռնիոյ մէջ սկսեր են այժմ շատցնել *cactus opuntia* ըսուած բոյսը. ասոր վրայ շուտով կբազմանայ որդնուկը՝ ուստի կենէ *որդան կարմիր* (*զրմըզ*) ներկը: Կըսեն թէ այս բոյսը այնպիսի հողերու վրայ կբուսնի որ ուրիշ բերք չեն կրնար բերել: Ամէն մէկ թուփը կրնայ բերել 10-էն մինչեւ 20 ֆունթ (*գրեթէ 3-էն մինչեւ 6 օխայ*) որդնուկ, եւ սովորական գինն է ֆունթին 1 տոլլարէն մինչեւ 2 $\frac{1}{2}$ տոլլար:

ԴԺԲԱՂԴՆԵՐՈՒՆ ԴԺԲԱՂԴԸ.

Ամերիկայի Միացեալ Նահանգաց Վարուիք քաղաքը Սամուէլ Մուռ անունով մարդ մը կայ եղեր որ մօտերս ինքզինքը մեռցընելով ազատեր է վերջապէս այնքան մեծամեծ դժբաղդութիւններէն ու փորձանքներէն, որոց արեւաբար տանելու համար յիրաւի հարկաւոր է եղեր երանելոյն Յոբայ համբերութիւնը, զոր յոյժ սակաւք ունին, եւ դժբաղդ Մուռը՝ ինչպէս որ կերելի՝ ամենեւին չէ ունեցեր: Այս մարդը տղայ ժամանակէն որք (*հօֆուզ*) մնացեր է: Ութ տարեկան ատենը ոտքը կկոտրի, եւ կաղ կմնայ բոլոր կենացը մէջ: Տասուերկու տարեկան ատենը իւր մէկ ընկերներուն հետ պարտիզին մէջ խաղացած ատենը՝ դիպուածով մը կզարնէ կմեռցնէ ատերձանակով իւր մէկ ընկերը: Քսան տարեկան ատենը կկարգուի, երկու տարիէն կինը կխենդենայ, եւ երեսուն տարիէն աւելի է որ այն խեղճութեան մէջ է: Անդրանիկ որդին ծառէն կընկնի կմեռնի, եւ մարմինը անգղները կուտեն: Վեց տարի առաջ իւր մէկ հատիկ աղջիկը յանկարծահաս մահուամբ կմեռնի: Վերջապէս անցեալ օգոստոսին մէջ տունն ալ կայրի, եւ ինքը կմնայ օրուան հացին կարօտ՝ խեղճ ողորմելի, ու սոսկալի աղքատութեանը մէջ մարդկանց օգնութենէն ու Աստուծոյ ողորմութենէն յուսահատած՝ թշուառաբար ինքզինքը կմեռցնէ: